Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆՆ ՈՒ ՄԱՐՏԻԿԸ

(Ս. Դ. Շահումյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Սա. Շահումյանի տեսական ժառանգությունը ոչ միայն Անդրկովկասի, այլև ողջ համառուսաստանյան պրոլետարիատի դասակարգային պայքարի ակնհայտ նվաճումն է։ Այն իր ողջ բովանդակությամբ ինտերնացիոնալիստական է և պատկանում է միջազգային բանվոր դասակարգին։ Ստ. Շահումյանի գրչի տակ հարցերի ստացած լուծումները ըստ էության տեսական ընդհանրացումներ են, որոնք ընդհանուր գծերով կարող են կիրառելի լինել կամ ելակետի դեր խաղալ նաև ժամանակակից համանման պայմաններում։ Մարքսիզմ-լենինիզմը լոկալ գիտություն չէ։ Նրան խորթ է ազգային սահմանափակությունը։ Ուստի բնական է և օրինաչափ, որ մարքսիզմ-լենինիզմի ոչ միայն դասական հեղինակների, այլև նրա ստեղծագործական ոգուն հավատարիմ մնացած անձնվեր հեղափոխականների տեսական ժառանգությունը օրինական հետաքրքրություն է ներկայացնում միջազգային բանվոր դասակարգի համար։

Բանվոր դասակարգի գործին Ստ. Շահումյանի կատարյալ նվիրվածությունը տարակույս չի առաջացնում։ Հանրահայտ է նրա բացառիկ անձնվիրությունը հեղափոխության հանդեպ։

Իր գիտակցական կյանքի սկզբից Ստ. Շահումյանը միջավայրի նկատմամբ քննական-քննադատական հայացք ձգեց։ 90-ական թվականներին, երբ հայկական, անդրկովկասյան և համառուսաստանյան հասարակական-քաղաքական կյանքի մակերեսի վրա լողում էին բազում բուրժուական ու մանրբուրժուական կուսակցություններ, երբ վերջիններիս գործիչներից շատերը իրենց համար հեղինակավոր դիրք էին ստեղծել, ունեին ոչ քիչ թվով բարեկամներ ու հետևորդներ, երիտասարդ Ստ. Շահումյանը ժամանակի տվյալ հատվածում դեռևս ոչ մեծ թիվ կազմող համախոհ հասակակիցների հետ նվիրվեց մարքսիզմի ուսումնասիրմանը, ինչպես պրոլետարական հեղափոխության ճանապարհով։ 1902 թ. նա անզիջում քննադատության ենթարկեց ժամանակի աչքի ընկնող լուսավորիչ և դեմոկրատ գործիչներին, այն պարզ պատճառով, որ նրանք չունեին մի որոշ քաղաքական ծրագիր, քանի որ չունեին որոշակի տեսական հենարան։ 1906 թ. Ստ. Շահումյանը մարքսիզմի այն ակնառավոր տեսաբաններից մեկն էր, որոնք մնայուն արժեքներ էին ստեղծում ազգային հարցի տեսության մշակման գործում։ Եթե այդ վաղ ժամանակներում Ստ. Շահումյանի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատությունը հայերենից բացի լույս տեսներ ռուսերեն և այլ լեզուներով, անկասկած, հեղափոխական տեսաբանի նրա հռչակը այդ վաղ ժամանակներում անհամեմատ լայն տարածում կգտներ։

Ստ. Շահումյանի ելակետը դասակարգն էր։ Սոցիալական միատարրության ազգայնական քարոզների թանձր մշուշում նա ամենայն նրբությամբ զա-

նազանում էր հայ բանվորին հայ բուրժուազիայից, ռուս, վրացի, ադրբեջանցի, թուրք և ամեն մի այլ բանվորին իր ազգային բուրժուազիայից, իրենց տնտեսական, սոցիալական, կուլտուրական և բազում այլ շահերով ու հետաքրքրություններով հանդերձ։ Տեսնելով ազգային ընդհանուրի մեջ բանվորության շահերի հնարավոր ընդհանրություններ, Ստ. Շահումյանը դասակարգային էր առաջնություն տալիս։

Ստ. Շահումյան տեսաբանը ամբողջովին ձուլված էր Ստ. Շահումյան հեղափոխական կազմակերպչի, մարտիկի ու ղեկավարի հետ։ Որքան էլ բոլշևիկյան գործիչներից ամեն մեկը անպայման հեղափոխական պրակտիկ էր, այնուամենայնիվ նրանցից ամեն մեկը չէր հեղափոխական տեսաբան կամ նույնիսկ պրոպագանդիստ։ Ինչպես պրակտիկ քաղաքական գործունեությունը, նույնպես և տեսական, պրոպագանդիստական աշխատանքը ընդունակությունների հակումների որոշ ուրույն գումար է պահանջում, որը բոլորի մոտ հավասար չափով չի կարող թաքնված լինել։

Իսկական լենինյան Ստ. Շահումյանը իր գործունեության ամեն մի առանձին հատվածում դրսևորում էր տեսության ու գործնական պայքարի ակնհայտ ներդաշնակություն։ Թե բարեկամների և թե թշնամիների հետ նա միշտ մնում էր միևնույն գաղափարական մարտիկը։ Նրա միտքն ու հոգին տարբեր գաղափարական սիստեմների կամ նրանց առանձին տարրերի խաղաղ գոյակցության հանգրվաններ չէին։ Ստ. Շահումյան լուսավոր մտավորականի մեջ նստած էր պրոլետարական մարդկայնության մի կատարյալ օրինակ՝ լենինյան մարդկայնության տիպարը։

Կովկասի աշխատավոր մարդկությունը ի դեմս Ստ. Շահումյանի մոտիկից տեսավ շարքային ու հասարակ մարդկանց նկատմամբ անկաշառ նվիրվածությունը։ Գիտությունը բավական շատ խոսք է կուտակել Ստ. Շահումյանի կենսուղու վերաբերյալ։ Սույն հոդվածը դարձյալ մի փորձ է նրա հեղհոկտեմբերյան շրջանի գործունեության լուսաբանման, այդ ժամանակաշրջանում նշանավոր հեղափոխականի առավելապես տեսական ժառանգության վերլուծությամբ հանդերձ։

1917 թ. նոյեմբերից 1918 թ. սեպտեմբերը ընկած ժամանակամիջոցում Անդրկովկասում տիրող վիճակը կարող է համեմատվել մարդկային պատմության ամենաբարդ և ամենախճճված իրադրությունների հետ, որպիսիք եղել են մեր դարի անցյալ մոտ վեց տասնամյակների ընթացքում։ Միևնույն աշխարհագրական հատվածի բոլորովին ոչ-այնքան հեռու ընկած վայրերում և միևնույն, և զանազան ազգերի սոցիալական զարգացման տարբեր աստիճաններ, տնտեսական խիստ հակառակ պատկերներ, ազգերի, դասերի, դասակարգերի ու կուսակցությունների խիստ խայտաբղետ կազմ, վերջիններիս տարբեր քաղաքական ձգտումներ, տարբեր օրիենտացիաներ՝ արտաքին և ներքին փոխհարաբերությունների մեջ, արտասահմանյան առանձին տերությունների և պետությունների խմբերի իրար լրացնող և իրար հակասող պլաններ՝ երկրամասի նկատմամբ, աշխատավորության գլխին կախված գաղութացման վտանգ, բանվորների ու գյուղացիների ղանգվածային հեղափոխական շարժում՝ Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի ներքո, վերջինս առայժմ հանգեցրել է երկրամասի պրոլետարական կենտրոնում՝ Բաքվում ու նրա շրջաններում, նոր՝ սովետական իշխանության ստեղծմանը։ Այդ իշխանությունը մահու և կենաց կռիվ եր մղում ներքին ու արտաքին հետադիմության դեմ, նրա օրի-

նակին են հետևում ողջ Անդրկովկասի ազատատենչ բանվորներն ու շահագործվող գյուղացիները՝ բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ։ Սա դեռ բոլորը չէ. իսկ բուրժուական, կալվածատիրական դասակարգերի ու բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակամարտությունը, գերմանա-թուրքական խմբավորման մի քանի ամիս տևող ահեղ պատերազմական արշավանքը Անդրկովկասի վրա, Սովետական Բաքվի և Անդրկովկասի աշխատավորների դեմ անգլիական իմպերիալիստների կողմից նյութվող դավերը, իսկ ժողովրդական լայն զանգվածների հայրենասիրական մեծ կռիվը, նրանց ցված հերոսական ճակատամարտերը հայրենի հողը ոտք դրած օտար դավթիչների և ներքին պառակտիչների, դավաճանների դեմ, և, վերջապես, Սովետական Ռուսաստանի և ժողովուրդների մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի անընդհատ ուշադրությունը անդրկովկասյան ժողովուրդների բախտի նկատմամբ, նրանց անշահախնդիր եղբայրական օգնությունն ու քաջալերանքը պատմական մեծ շրջադարձի եզրին գտնվող, իր վաղվա օրվա համար դժվար ու լարված հեղափոխական պայքար մղող հայ, վրացի ու ադրբեջանցի աշխատավորներին։

Այդ բարդ ու լարված պայմաններում Ստ. Շահումյանը բոլշևիկ կոլեգաների հետ կանգնած էր հեղափոխական մարտերի առաջին գծի վրա։ Նա կազմակերպում և գլխավորում էր Կովկասի աշխատավորների ազատագրական մեծ պայքարը, գտնվում էր վրացի, հայ, ռուս և ադրբեջանցի պրոլետարների և մարտնչող գյուղացիների շարքերում, ոգևորում էր նրանց նաև իր անձնական օրինակով, ասում նրանց համոզիչ ու երջանիկ ապագայի նկատմամբ հույս ներշնչող իր խոսքը։ Ստ. Շահումյանը ելույթներ էր ունենում բանվորական ժողովներում, թերթերում գրում հոդվածներ, կարդում զեկուցումներ և դասախոսություններ, ողջ երկրամասով մեկ արձակում իր ստորագրությամբ կոչեր, նամակներ ու հեռագրեր ուղարկում՝ Վ. Ի. Լենինին։ Ահա այդ փաստաթղթերի մեջ էլ նա զարգացնում է իր հայացքները, արտահայտում իր կարծիքը, տեսական եզրակացություններ անում, դրանցով իսկ ստեղծելով և սերունդներին թողնելով գրավոր խոսքի նշանակալից արժեքներ։

Ստ. Շահումյանը առաջին հերթին պատասխան էր տալիս գլխավոր հարցին. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը։ Այդ կապակցությամբ նա լուծում էր քաղաքական, տեսական մի շարք կնճռոտ պրոբլեմներ, որոնք կարևոր նշանակություն ունեն սովետական ժողովրդի, Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմության գիտական լուսաբանման համար և որպես մարքսիստական-լենինյան տեսությունը ստեղծագործորեն կիրառելու արժեքավոր փորձ։

1917 թ. հոկտեմբերի 29-ին լույս տեսավ նրա ստորագրությունը կրող կոչ՝ ուղղված «Կովկասյան բանակի բոլոր ընկեր զինվորներին»։ Հեղափոխության լուրը այդ ժամանակ դեռ նոր էր հասել Անդրկովկաս, դեռ բոլորի համար չէր, որ պարզ էր իրերի վիճակը։ Հեղափոխական զինվորներին ուղղված այդ կոչում բացահայտվում էր Պետրոգրադի Հոկտեմբերյան հեղաշրջման ժողովրդական բնույթը, ցույց տրվում զինված մասսայի պատմական խնդիրը։ Նրանում հստակորեն նշվում էր Կովկասի աշխատավոր բնակչության սոցիալական ազատության գլխավոր ելքը։ «Բոլորը, ովքեր ժողովրդի բարիքը և հյուծված ու տանջված երկրում ամենաարագ կերպով խաղաղություն ու կարգ հաստատել են ցանկանում, պետք է անհապաղ ու վճռականորեն անցնեն նոր կառավարության, Լենինի գլխավորած Ժողովրդական կոմիսարների կառավարու-

թյան կողմը» (տես Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Երևան, 1958 թ., էջ 18։ Այսուհետև նշված էջերը վերաբերում են սույն հատորին)։

Ստ. Շահումյանը հսկայական ուշադրություն է դարձնում Անդրկովկասի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների յուրօրինակություններին։ Նա բացահայտում և վերլուծում է այդ յուրօրինակությունները, պահանջում, որ բոլշևիկները հաշվի առնեն դրանք իրենց տակտիկան մշակելիս։ Նա նկատում է, որ Անդրկովկասում կալվածատիրական ստրկությունը անհամեմատ ավելի սուր ձևով է արտահայտվում, քան Ռուսաստանի մի որևէ այլ մասում։ Բացի այդ, «Անդրկովկասում կարելի է տեսնել ոչ միայն ճորտատիրական իրավունքի մնացուկներ, այլև հաճախ ճորտատիրական հարաբերություններ»։ Նա ցույց է տալիս այդ հանգամանքի անբարենպաստ ազդեցությունը երկրամասում հեղափոխության զարգացման վրա։ Տեղական յուրօրինակություն է նաև նացիոնալիզմի այնպիսի՞ ուժգին դրսևորումը։ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները անց են կացնում ըստ ազգությունների առանձնանալու, ազգային տերիտորիաները անջրպետելու դավաճանական գիծ, պրոլետարական, սոցիալիստական Ռուսաստանից անջատվելու կործանարար քաղաքականություն։ Այստեղից Ստ. Շահումյանի հայտնի եզրակացությունը. «Կովկասում հեղափոխության ամենաոխերիմ թշնամին միշտ եղել է և կմնա նացիոնալիզմը» (էջ 33)։ Այս և մի քանի այլ հանգամանքներ իրավունք են տալիս Ստ. Շահումյանին 1917 թ. հունվարի 31-ին ի լուր Կովկասի բոլոր բանվորների և գյուղացիների հայտարարելու «Ռուսաստանում ոչ մի տեղ հեղափոխության գործն այնպիսի վտանգի մեջ չի գտնվում ներկայումս, ինչպես մեզ մոտ՝ Կովկասում»։ Դա աշխատավորների ազատության դեմ ուղղված ներքին հակահեղափոխության և արտաքին ինտերվենցիայի վտանգն էր։ Հետևաբար՝ «Սովետական իշխանությունը Կովկասում պետք է ստեղծել անհապաղ» (էջ 66)։

Թեև 1917-ի նոյեմբերից 1918-ի սեպտեմբերը ընկած ժամանակամիջոցը պատմական երկարատև մի շրջան չէ, բայց և այնպես ժամանակի տվյալ հատվածում Անդրկովկասում ստեղծվեցին քաղաքական տարբեր իրադրություններ։ Ստ. Շահումյանի խորաթափանց միտքը վերլուծության է ենթարկում, կանխորոշում դրանց խոստացած հեռանկարները և մարքս-լենինյան տեսության հիման վրա նշում երկրամասի բոլշևիկների, բանվորների ու գյուղացիների խնդիրները սոցիալիստական հեղափոխության հաղթանակը երկրամասում ապահովելու համար։ Նա վճռական պահանջ է դնում. սովետներ ստեղծել այնտեղ, ուր այդպիսիք չկան, իսկ եղածները ամրապնդել, տեղական սովետների միավորումով կազմել գավառային ու նահանգական սովետներ և ապա՝ երկրային կենտրոնական սովետ, որոնք պետք է լինեին լիիշխան հեղափոխական մարմիններ։ Ըստ Ստ. Շահումյանի, կատարված միջոցառումները պետք է հանգեին նրան, որ Կովկասում ստեղծվեր «...ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով վերջ կդներ Կովկասի հակահեղափոխությանը, երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդեր դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորություն» (60—70)։

Ստ. Շահումյանի գրչի տակ բացահայտվում են Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հնարավորության պայմանները,

ինչպես նաև սովետական իշխանության հաստատումը ձգձգվելու և աշխատավորների հեղափոխական պայքարի ժամանակավոր անհաջողության պատճառները։ Ինչպես հայտնի է, սրանք գիտական լուրջ պրոբլեմներ են, որոնց վրա այնպես քրտնաջան կերպով աշխատել և աշխատում են սովետական պատմաբանները։

Որպես երկրամասում սովետական իշխանության հաստատման և նրա գոյության հարատևության կարևորագույն պայման, որպես մշտապես առկա գործոն, Ստ. Շահումյանը գիտում է աշխատավորների ինտերնացիոնալ եղբայրությունն ու նրանց անխախտ միասնությունը ազատագրական շարժման մեջ։ Նա այդ համարում է կենսական պահանջ սոցիալիստական հեղափոխության ձգտող բոլոր երկրների, այդ թվում նաև Ռուսաստանի ու Անդրկովկասի պրոլետարների համար։ Աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը ընդունակ է խորտակելու և ներքին հակահեղափոխության, և արտաքին ինտերվենտների բոլոր ուժերը։

Բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները և սոցիալիստական հեղափոխությունից սարսափող բոլոր հակաժողովրդական ուժերը զգում էին, որ Կովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և սոցիալիզմի կառուցման վճռական պայման է Ռուսաստանի պրոլետարիատի և գյուղացիության հետ երկրամասի աշխատավորների համատեղ պայքարը։ Դրա համար էլ նրանք ամեն ջանք գործ էին դնում, որպեսզի Անդրկովկասը անջատեն Սովետական Ռուսաստանից և դնեն օտարերկրյա կապիտալիստական տերությունների հովանու տակ։ Ստ. Շահումյանը մերկացնում էր հակահեղափոխականների անջատողական քաղաքականությունը, ցույց տալիս Սովետական Ռուսաստանի և ռուսական պրոլետարիատի հետ համատեղ պայքարի պատմական մեծ անհրաժեշտությունը Անդրկովկասի և ռուս ժողովրդի հետ իր բախտը կապած ամեն մի այլ ժողովրդի ազատագրական պայքարի հաղթանակի համար։

Ստ. Շահումյանը բոլշևիկյան կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում էր նաև այն հանգամանքի վրա, որ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի կարևորագույն անհրաժեշտ պայման է քաղաքի և գյուղի աշխատավորների դաշինքը։ Ինչ խոսք, որ Անդրկովկասը շահագործողական դասակարգերի քանակական և որակական կազմի և դրանց փոխհարաբերության տեսակետից տարբերվել գծեր ուներ Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների համեմատ։ Ստ. Շահումյանը մի շարք անգամներ նշել է Անդրկովկասում պրոլետարիատի նկատմամբ գյուղացիության անհամեմատ բազմաքանակ լինելը։ Բացի այդ, պրոլետարիատն էլ երկրամասի տարբեր վայրերում միատեսակ քաղաքական կովի դպրոց չէր անցել, միևնույնը չէր նրանց կազմակերպվածությունը, նրանց դասակարգային ինքնագիտակցության մակարդակը և այլն։ Իսկ գյուղացիության շատ խավերում, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման և իրականացման պահը, ընդգծված կերպով զգացվում էին հայ հարուստների, վրաց իշխանների, խաների ու բեկերի խաբեական քաղաքականության ծանր հետևանքները։ Գյուղացիությունը անհամեմատ շատ էր ազդվել բուրժուական կուսակցությունների սրսկած նացիոնալիզմից։ Իսկ նացիոնալիզմը բուրժուազիայի և կալվածատիրության ձեռքին միջոց էր պրոլետարիատին և գյուղացիությանը իրարից մեկուսացնելու, նրանց հեղափոխական մարտունակու-

թյունից զրկելու համար։ Այստեղից էլ, ինչպես նշում էր Ստ. Շահումյանը, Անդրկովկասի բոլշևիկների գլխավոր խնդիրներից մեկը, այն է՝ բուրժուազիայի դեմ մղվող պայքարի մեջ անընդհատ ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Ստ. Շահումյանը իր հոդվածներում ու ելույթներում բերելով բանվոր դասակարգի և գյուղացիության համատեղ պայքարի բազմաթիվ օրինակներ, միաժամանակ համարձակորեն նշում էր գյուղացիության միջավայրում տարվող քաղաքական, կազմակերպչական, դաստիարակչական աշխատանքի թույլ կողմերը։ Եթե երկրամասի պրոլետարական կենտրոններում և նրանց մոտ ընկած գավառներում ստեղծված էին սովետներ, ապա կենտրոններից հեռու ընկած մի շարք գյուղական վայրերում 1917, 1918 թվականներին սովետներ բացարձակապես չկային։ Հեղափոխական իշխանության տեղական օրգանների բացակայությունը նման վայրերում հակահեղափոխությանը թև էր տալիս և հնարավորություն՝ տեսնելու իր գործը։ Այս հանգամանքը իր հերթին պարզ ու հասկանալի է դարձնում Անդրկովկասում սովետական իշխանության համար աշխատավորների մղած պայքարի դժվարությունները և ժամանակավոր անհաջողությունները։

* * *

Բուրժուական դասակարգերն ու բուրժուական կուսակցությունները բնութագրելիս, Ստ. Շահումյանը նկատում է, որ նրանք քարացած չեն իրենց գործելակերպի և հայացքների մեջ։ Քաղաքական պրակտիկ նշանակություն ունեցող հարցերին զուգահեռ նա քննում է բուրժուական դասակարգերի ու նրանց կուսակցությունների քաղաքականությունը հեղափոխության զարգացման տարբեր էտապներում, ցույց տալիս, որտեղ որ այդ կա, նրանց էվոլյուցիան։ Վրաց մենշևիկները, նկատում է Ստ. Շահումյանը, որոնք այնքան սիրում էին իրենց ներկայացնել որպես «սոցիալիստներ», եղան «...անջատողական ու նացիոնալիստական քաղաքականության նախաձեռնողները Կովկասում..., որոնք բացահայտորեն դարձան վրացական ազգային կուսակցություն» (էջ 36)։ Շատ հարցերի հետ, Ստ. Շահումյանը ուշադրություն է դարձնում էսեռների ու դաշնակցականների ներկուսակցական հակասությունների, ինչպես նաև Անդրկովկասում բուրժուական լագերի տարբեր խմբավորումների միջև եղած հակամարտությունների վրա։ Կան ձախ և աջ էսեռներ, որոնք մի շարք հարցերում տարբեր կարծիքներ են պնդում, գնալով ավելի ու ավելի են խորանում հակասությունները դաշնակցականների շարքերում։ Խոր թշնամանք կա վրաց մենշևիկների ու դաշնակցականների, և այս երկուսի ու մուսավաթիստների միջև։ Առանց այս հանգամանքների խոր ուսումնասիրության, անհնար է քննարկման դնել և սպառիչ լուծում տալ այն հարցին, թե ինչպես՝ «Անդրկովկասյան կոմիսարիատը, սոսկալով իր քաղաքականությամբ ստեղծված անարխիայից ու հակահեղափոխությունից՝ անզորությունից հրաժարվեց իր լիազորությունից» (էջ 67)։ Եվ նաև այն հարցին, թե այդ ինչպես պատահեց, որ Անդրկովկասյան կոմիսարիատին փոխարինության եկած Անդրկովկասյան սեյմի անպետքության օգտին բոլշևիկներից բացի «արտահայտվեցին սոցիալիստ-հեղափոխականներն ու «դաշնակցություն» կուսակցությունը» (67)։ Վերջապես, նաև այն հարցին, թե ինչպես երկրամասում առաջ եկան երեք ազգայնական մարիոնետային կառավարություններ, որոնք միջազգային ռեակ-

ցիայի սպասարկուներն էին և իրենց քաղաքականության մեջ հենվում էին օտարերկրյա կապիտալի վրա։

* * *

Անդրկովկասի պրոլետարիատի ու գյուղացիության պայքարը Ստ. Շահումյանը չի դիտում որպես պայքար միայն տեղական հակահեղափոխության դեմ, նա դրա մեջ տեսնում է անդրկովկասյան աշխատավորների համատեղ պայքարը միաժամանակ և ներքին հակահեղափոխության, և միջազգային ռեակցիայի դեմ։

Նախաֆեոդալական ժամանակաշրջանից մինչև իմպերիալիզմի դարաշրջանը Անդրկովկասը շարունակում էր մնալ Արևելքի ու Արևմուտքի տերությունների «հետաքրքրության» առարկան։ Եվ այժմ՝ 1917—1918 թվականներին, երբ Հոկտեմբերն իր շրջագծի մեջ էր վերցրել երկրամասը, իմպերիալիստական գիշատիչները Արևելքից, Արևմուտքից ու Հարավից՝ ցամաքով, ծովով ու օվկիանոսով ուժեր էին ուղարկում Անդրկովկասում պատմության տրամաբանական ընթացքը իր ուղուց շեղելու։ Ստ. Շահումյանը Անդրկովկասի աշխատավորների դեմ միջազգային ռեակցիայի հարձակումները համարում էր Սովետական Ռուսաստանի դեմ նրա ընդհանուր հարձակման բաղկացուցիչ մասը։ Հաղթանակի ձգտող ազատատենչ մարտիկի համար նա խիստ կարևոր էր համարում պարզել, թե ինչպիսին է հակառակորդի կռվող ուժերի մարտակարգը, ինչպիսին են տարբեր կողմերից գրոհակետի վրա մղվող թշնամու խմբավորումների փոխհարաբերությունները։ Ստ. Շահումյանը այս հարցին պատասխանելիս բացահայտում է թուրք-գերմանական և անգլո-ֆրանսիական կոալիցիաների ներքին և փոխադարձ երկպառակությունները Անդրկովկասը նվաճելու նրանց, ըստ էության, միատեսակ ձգտման մեջ։ Դրան զուգահեռ նա ցույց է տալիս այդ ուժերի դեմ Բաքվի պրոլետարիատի և ողջ Անդրկովկասի աշխատավորների կռվի հաղթանակի հնարավորությունները։

Այդ ամենը պրոլետարական կռվի փորձաքարի վրա ստուգված տեսական եզրակացություններ են։ Այդ փորձաքարը ամենից առաջ Բաքվի կոմունան է, որը մի քանի ամիս շարունակ հերոսական կռիվ էր մղում ներքին և արտաքին թշնամիների դեմ։

Բաքվի պրոլետարիատի կռիվը իր նշանակությամբ մեծ մասշտաբներ էր ընդգրկում, քանի որ «Բաքվի մոտ վճռվում էր Անդրկովկասի ճակատագիրը» (138)։ Նրա պարտությունը կնշանակեր «...հեղափոխության կործանում երկրամասում», որը կհասցներ «...միջնադարյան խանությունների ստեղծման ու թուրքական լծի»։ Իսկ հաղթանակը կլիներ «...բանվորա-գյուղացիական հեղափոխության հաղթանակը..., Կովկասի ազատության ու կուլտուրական բարգավաճման երաշխիքը» (139)։ Այստեղից Բաքվի սովետի պատմական խնդիրը՝ պայքարել ողջ երկրամասում սովետական իշխանության հաստատման համար։ Պարզ է, որ նրա այդ պայքարը ընթանալու էր երկրամասի բոլոր աշխատավորների ու շահագործվողների պայքարի ընդհանուր ճակատում։ Բաքվի սովետը խնդիր ուներ տարածելու իր աշխատանքը ամբողջ Անդրկովկասում և միավորելու բոլոր ազգությունների բանվորներին ու գյուղացիներին։ Դրա կարևորագույն պայմանը Ստ. Շահումյանը տեսնում էր այն բանում, որ Բաքվի սովետի պայքարը Ռուսաստանի սովետական իշխանության պայքարի անբաժան մասն էր, Հոկտեմբերյան հեղափոխության շարունակությունը, որը

գլխավորապես լուծում էր այնպիսի խնդիրներ, ինչպիսին լուծում էր Սովետական Ռուսաստանը։

Բաքվի կոմունայի հաղթանակի երաշխիքների տեսական քննության մեջ Ստ. Շահումյանը պատշաճ ուշադրություն է դարձնում Բաքվի շրջանների և ողջ Անդրկովկասի գյուղացիության կազմակերպմանը։ Ստ. Շահումյանի տեսադաշտում գյուղացիության հարցը, մանավանդ Անդրկովկասում, հեղափոխության կենսական հարցերից մեկն էր։ Նա գտնում էր, որ Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ պետք է իր մեծ կռվում միշտ հանդես գար գյուղացիության հետ սերտորեն դաշնակցած։

Բաքվի կոմունայի կապակցությամբ Ստ. Շահումյանը առաջ էր քաշում այն հարցը, թե ինչպես քաղաքացիական կռիվը քաղաքում և նրա շրջաններում ստանում է որոշ ազգային գունավորում (150)։ Այդ առթիվ նա ընդհանրացնում է իր միտքը. «Կովկասում ոչ մի դեպքում հնարավոր չէ քաղաքացիական պատերազմ՝ առանց ազգային երանգի...» (183)։ Այս, իհարկե, բոլորովին էլ չէր նշանակում, թե աշխատավորների պայքարը դադարում էր հեղափոխություն լինելուց, դասակարգային պայքար լինելուց։ Տեղական առանձնահատկությունը այդ աստիճան նենգափոխված կարող էին ներկայացնել միայն հեղափոխության ոչ բարեկամները։ Բոլշևիկների խնդիրն էր՝ մարտից առաջ, մարտի ընթացքում և հետո հաշվի առնել այդ հանգամանքը և արմատախիլ անել ազգային թշնամանք հարուցող բոլոր պատճառները։ Բաքվի բոլշևիկները չէին կարող անտարբեր անցնել այն փաստի կողքով, որ Կարմիր բանակի ստեղծման հետ մեկտեղ քաղաքում շարունակում էին գոյություն ունենալ ազգային զորագնդեր, իսկ ժողկոմխորհի ստեղծումից հետո ասպարեզի վրա դեռ մնում էին ազգային խորհուրդները։ Մի՞թե կռվի ծանր պահին պետք էր անուշադրության մատնել այն հանգամանքը, որ ազգային զորագնդերը իրենց հայտարարում էին սովետական իշխանության կողմնակիցներ։ Բոլշևիկները չէին հրաժարվում որոշ պայմաններում օգտագործել նրանց։ Բայց ահա նրանք պայքարի մեջ մտցնում են ազգային տարր։ Հետևաբար, ինչպես գրում է Ստ. Շահումյանը, «Հանուն ինտերնացիոնալիզմի հաղթանակի, չպետք է հնարավորություն տալ ամրանալու ազգային խորհուրդներին ու գնդերին։ ...Քաղաքական ֆունկցիաներով օժտված պետք է լինի իշխանության միակ օրգանը՝ բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների սովետը» (150)։

Ստ. Շահումյանի երկերը շատ նյութ են տալիս հեղափոխական իրադրության պայմաններում բոլշևիկյան դիվանագիտության լուսաբանման համար։ Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը Բաքվի կոմունայի ղեկավարներին խորհուրդ էր տալիս դիվանագիտություն սովորել։ Բաքվի կոմունայի հետ կապված Ստ. Շահումյանի հոդվածներում, զեկուցումներում, կառավարական դեկրետներում և կոչերում ցայտուն երևում է, թե Բաքվի բոլշևիկները ինչպիսի հմտություն են հանդես բերում այլ ուժերի հետ բանակցություններ վարելիս, նրանց հետ դիվանագիտական փոխհարաբերությունների մեջ մտնելիս։ Եթե հեղափոխության շահը թելադրում էր, նրանք չէին հրաժարվում իրենց նպատակներին ծառայեցնել ներքին հակահեղափոխության լագերում տիրող հակասությունները, երբեք չմոռանալով, իհարկե, թե ում հետ գործ ունեն։ Միաժամանակ Բաքվի բոլշևիկները ամեն ջանք գործ էին դնում օգտագործելու օտարերկրյա իմպերիալիստների կոնֆլիկտներն ու պայքարը, ինչպես այդ սովորեցնում էր Վ. Ի. Լենինը։

Հետևելով լենինյան ցուցումներին, Ստ. Շահումյանը պատշաճն էր մատուցում հեղափոխության հաղթանակի ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ գործոններին, այն բանին, թե կոմունայի ղեկավարները որքան ճիշտ տակտիկա կմշակեին, որքան ճիշտ կըմբռնեին իրենց վիճակն ու խնդիրները և ինչպիսի նվիրվածություն կցուցաբերեին նավթաշխարհի պրոլետարիատի գործին։ Ճիշտ տակտիկայի ու վարքագծի փայլուն օրինակ է Բաքվի բոլշևիկների դիրքը քաղաքում սովետական իշխանության կրիտիկական օրերին (1918 թ. հուլիս-օգոստոս)։ Հայտնի է, թե ինչպես վտանգը բոլոր կողմերից էր սպառնում՝ թե ներսից և թե դրսից։ Դաշնակցականները, էսեռներն ու հակահեղափոխության մյուս ուժերը հինգերորդ շարասյան դեր էին խաղում։ Նրանք ուզում էին քաղաքը հանձնել անգլիական իմպերիալիստների ձեռքը։ Այդ դավաճանական տրամադրությունները թափանցում են նաև սովետի մեջ։ Մինչդեռ բոլշևիկները մնում են հեղափոխության հաղթանակի համար մինչև վերջ պայքարելու դիրքերում։ Նրանք, իհարկե, չէին անտեսում, որ հարձակվող թուրքական ուժերը շատ էին, բայց այդ չէր նշանակում, թե պետք էր հուսալքվել և խույս տալ դժվարություններից։ Ստ. Շահումյանը, քաջ գիտենալով իրենց վիճակի ծանրությունը, գտնում էր, որ «Սկսած պայքարի այս կամ այն ելքը շատ բանով կախված է» իրենց վճռականությունից ու համարձակությունից։ Չգերագնահատելով սուբյեկտիվ գործոնի դերը, գլխավորն ու հիմնականը նա համարում էր մասսաների, ժողովրդական լայն զանգվածների կազմակերպված պայքարը։

Հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում Ստ. Շահումյանի գործունեության և գրական ժառանգության մեջ ուսումնասիրության մի առանձին բնագավառ է Ստ. Շահումյանի նամակները Սովետական Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը և մասնավորապես Վ. Ի. Լենինին։ Նրանցում շատ տեղ է հատկացված Բաքվում և նրա շրջաններում նորաստեղծ սովետական իշխանության կառավարման հարցերին։ Բաքվի ժողկոմսովետը Անդրկովկասում առաջին սովետական կառավարությունն էր։ Հարցերը շատ էին, լուծումները բարդ։ Ստ. Շահումյանը մի շարք առիթներով հարցում է անում Վ. Ի. Լենինին, ցանկանում իմանալ նրա կարծիքը։ Նա Վ. Ի. Լենինի ուշադրությանն է ներկայացնում Բաքվի ընդերքի, նավթարդյունաբերության և բանկերի ազգայնացման և այլ հարցերի վերաբերյալ Բաքվի ժողկոմսովետի ձեռք առած միջոցառումները, նրա հետ միասին քննարկում քաղաքում ստեղծված ծանր դրությունը հաղթահարելու, սովետական իշխանությունը ամրապնդելու հարցերը։ Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը ելակետային խոշոր արժեք է ներկայացնում Անդրկովկասում և ամեն մի ազգային հանրապետությունում սոցիալիստական կարգի պայմաններում երկրի կառավարման, տնտեսական շինարարության և պետական, քաղաքական անցյալ ու ժամանակակից խնդիրների լուծման, լուսաբանման համար։

* * *

Ամբողջովին ու լրիվ կերպով պայքարի մեջ ներգրավված Ստ. Շահումյանը միշտ չէ, որ հնարավորություն ուներ ծավալվելու։ Նա մեծ մասամբ հասցնում էր միայն առաջ թաշել այս կամ այն հարցադրումը, հակիրճ ու զուսպ հայտնել իր ինքնատիպ կարծիքը, բերելով իր միտքը հաստատող մի երկու օրինակ, իսկ հաճախ նաև բավարարվելով առանց օրինակների։ Ահա, օրինակ, նրա

ճառը Փետրվարյան հեղափոխության տարեդարձին նվիրված միտինգում (111—113)։ Ստ. Շահումյանը այստեղ անդրադառնում է կապիտալիզմից սոցիալիզմին անցման իշխանության ձևերին և շեշտը դնում է սովետների հանրապետության վրա։ «...Մենք արդեն ապրել անցել ենք պառլամենտարիզմի դարը,— ասում է նա,— հարկավոր է ստեղծել Սովետների հանրապետություն, որը և վերջ կդնի մարդու կողմից մարդու շահագործման» (112)։

Փարիզի կոմունայի մասին դասախոսության մեջ Ստ. Շահումյանը զուգահեռ է անցկացնում հնադարյան կոմունաների, Փարիզի կոմունայի և սովետների միջև։ Նա համառոտակի կանգ է առնում ֆրանսիական կոմունայի թույլ կողմերի, նրա պարտության պատճառների վրա։ Հետաքրքիրն այն է, որ նա ուշադրություն է հրավիրում այնպիսի հանգամանքների վրա, որոնք պրակտիկ նշանակություն ունեին Բաքվի կոմունայի հաղթանակի համար։ Որպես Փարիզի կոմունայի պարտության պատճառներից մեկը, Ստ. Շահումյանը հիշում է գյուղի հետ Փարիզի պատշաճ կապի բացակայությունը, որի շնորհիվ «...Թիերին հաջողվեց լիկվիդացնել հեղափոխությունն գավառներում և նրանց կտրել Փարիզի ազդեցությունից, գերմանացիների հետ միասին շրջապատելով այն» (248—249)։ Այս առնչությամբ Ստ. Շահումյանը շոշափում է կեցությունը փոփոխվելուն համապատասխան գիտակցության փոփոխման հարցը։ «Սոցիալիստական նոր կարգին,— ասում է նա,— պետք է համապատասխանի մտքերի, զգացմունքների ու հոգեբանության սոցիալիստական կերպը։ Շրջապատի նկատմամբ եղած մանր-սեփականատիրական վերաբերմունքը պետք է իր տեղը դիջի հասարակական, պետական սկզբունքին» (254)։ Այս ամենի հետ մեկտեղ կարևոր հետաքրքրություն է ներկայացնում Ստ. Շահումյանի արծարծած միտքը աշխատանքի արտադրողականության մասին։ Նա այդ համարում է Բաքվի հեղափոխական պրոլետարիատի օրվա խնդիրը (254)։

Ստ. Շահումյանը խոր ակնածանք էր տածում ականավոր մարքսիստ Գ. Վ. Պլեխանովի հեղափոխական ծառայությունների նկատմամբ։ Պատահական չէ, որ Բաքվի սովետի արտակարգ նիստում 1918 թ. հունիսի 15-ին նա իր զեկուցման սկզբում շոշափում էր «խորապես մեծարելի ու հարգելի նախկին ընկեր Գ. Վ. Պլեխանովի մահվան հարցը»։ Նա չի մոռանում նաև Գ. Վ. Պլեխանովի և բոլշևիկների միջև նրա կյանքի վերջին տարիներին եղած տարակարծությունները։ Պատասխան տալով այդ հարցին, նա գտնում է, որ այնուամենայնիվ, բոլշևիկների կուսակցությունը, որքան էլ այդ անմատչելի ու անհասկանալի թվա շատ կուսակցությունների համար, իրեն համարում է Պլեխանովի իդեաների լավագույն տարածողը», որի համար «չափազանց թանկ է Պլեխանովի հիշատակը, որպես ուսուցչի ու հեղափոխականի» (282)։

* * *

Ստ. Շահումյանը բազմաթիվ անգամներ անդրադարձել է անհատի և մեծ կոլեկտիվների փոխհարաբերության հարցերին։ Եվ ամեն անգամ նա այդ արել է մի դլխավոր նպատակով. օգնել շարքային բանվորներին ու գյուղացիներին բարձրացնելու իրենց քաղաքական ակտիվությունը, իրենց մեջ տեսնելու պատմություն կերտող ժողովրդի ներկայացուցիչներին։ Որքան ճշմարտություն և քաջալերություն կա Ստ. Շահումյանի հետևյալ խոսքերում, որոնք նա

1918 թ. մայիսի 16-ին արտասանել է «Իշխանության հարցը Անդրկովկասում» զեկուցման մեջ։

«Որպես սովետական իշխանության ներկայացուցիչ, ես ասում եմ՝ անձնական շահերը պետք է ենթարկվեն ընդհանուր շահերին...

Սովետական իշխանությունը առանձին անձերի իշխանություն չէ։ Բավական չէ միայն իր ներկայացուցիչներին ընտրել և նրանց հանձնել կառավարությունը։ Յուրաքանչյուր բանվոր պետք է մասնակցի այդ աշխատանքին, յուրաքանչյուրը իրեն պետք է զգա ոչ միայն օրենսդիր, այլև կատարող» (184)։

Ստ. Շահումյանը ուրախանում է բանվորների հաղթանակներով, բայց նա հուզվում է, մռայլվում բանվորների շարքերը թափանցած թշնամիների դավաճանությունից, աշխատավորների գործին հակահեղափոխականների հասցրած վնասների պատճառով։ Համապատասխանաբար փոխվում է նրա հոդվածների ու ելույթների ոճը, օգտագործվում մտքերը շարադրելու նորանոր ձևեր, խոսքը դիպուկ արտահայտող աֆորիզմներ։ Երանցում հեշտությամբ կարելի է համոզվել կարդալով Վ. Ի. Լենինին Ստ. Շահումյանի գրած նամակները, նրա ստորագրությամբ արձակված կոչերն ու դեկրետները, ինչպես նաև արտասանած զեկուցումների ու ճառերի տեքստերը։

Ստ. Շահումյան տեսաբանն ու քաղաքական ղեկավարը խորապես մարդկային անձնավորություն է, բարձր բարոյական հատկանիշների խտացում։ Նրա խոսքն ու գործը լրացնում էր միմյանց։ Կարծիք արտահայտելիս, ցուցում տալիս նա իրեն մյուսներից վեր չէր դասում։ Եվ նա երբեք մի կողմ չէր քաշվում։ Թշնամու դեմ մղվող կռվի բարիկադների վրա էր նրա ողջ ընտանիքը՝ կինը և մանուկ ու պատանի զավակները։ Հեղափոխական կռվից դուրս նրա և հարազատների համար ուրիշ տեղ չէր կարող լինել։ Եվ Ստեփան Շահումյանը դառնում էր իսկական օրինակելի և ընդօրինակելի։ Թուրքերի հարձակման կրիտիկական օրերին բոլշևիկներից նույնիսկ նրանք, ովքեր կանխազգում էին կոմունայի վախճանը, գնում էին ճակատ լոկ այն պատճառով, որ այդ պահանջում էր Ստ. Շահումյանը, որ կռվի ծանր ժամին իրենց ղեկավարը նախ և առաջ իրենց ընկերն էր։

Ահա թե ինչու դժվար է հիմա գիտակցել, թե քառասուն տարեկան հասակում կյանքից հեռացած իննսունամյա Ստեփան Շահումյանը մեզ հետ չէ։ Ով որքան շատ է իր ապրած տարիներին դասակարգի հետ լինում, այնքան հարատև են դառնում նրա անունն ու հիշատակը նույն այդ դասակարգի հիշողության մեջ։ Խոսքի և գործի միասնություն կազմող Ստ. Շահումյանին այսօր՝ նրա ծննդյան իննսունամյակին հարգանքի խոսք են ասում բոլոր ազգերի աշխատավոր մարդիկ։ Նա կոմունիստ էր, լենինյան դպրոցի հերոս և իրենով վեհացնում էր կոմունիստի բարձր կոչումը, խոր պատասխանատվություն զգալով միջազգային բանվոր դասակարգի առջև։